ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԳՈՐԱՅՔԻ ՄԻՋՆ ԴՊՐՈՑ

ՊԵՏ. ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Գորայք էլ.փոստ gorayq@schools.am Հեռ. 093018873

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար
պարոն Է. Մարտիրոսյանին
«Գորայքի միջն. դպրոց»ՊՈԱԿ-ի տնօրեն
Մ. Թադևոսյանից

Հարգելի՝ Է. Մարտիրոսյան

Հայտնում ենք Ձեզ այն մասին ,որ ՀՀ Սյունիքի մարզի «Գորայքի միջն. դպրոց»ՊՈԱԿ-ում առկա են քիմիա, աշխարհագրություն, երաժշտություն , կերպարվեստ, մաթեմատիկա ,հայոց լեզու,ֆիզկուլտուրա առարկաներից ուսուցչի թափուր տեղեր:

Ձեզ ենք ներկայացնում ուսուցչի թափուր տեղերի մասին հայտարարությունը:

Առդիր 1թերթ:

Դպրոցի տնօրեն՝ Մ. Թադևոսյան

05.11.2025թ.

**Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Գորայքի միջն.դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիա (7 դասաժամ), աշխարհագրություն (13 դասաժամ)), երաժշտություն (9 դասաժամ) ,կերպարվեստ (8 դասաժամ),) մաթեմատիկա (8 դասաժամ),ֆիզկուլտուրա(26 դասաժամ),հայոց լեզու (25 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ.նոյեմբերի 5-ից մինչև նոյեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թ. նոյեմբերի 20-ին՝ ժամը 13:00-ին**, Գորայքի միջն. դպրոցում,հասցեն՝Խ.Աբգարյան10/2: Տեղեկությունների համար զանգահարել 093018873 հեռախոսահամարով: